

§ 43. ԻՐԱՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

1

Հայաստանը, որտեղ շարունակում էին գահակալել Արշակունի արքայատոհմի ներկայացուցիչները, պարսկական նվաճման վտանգին դիմակայելու համար ստիպված էր փոխել իր արտաքին քաղաքականությունը և դաշնակցել Հռոմի հետ: Ի վերջո հայ-հռոմեական զորքերը Իրանի դեմ հաղթանակ տարան և կողմերը **298 թ. Մծբինի պայմանագրով Տրդատ III-ին ձանաչեցին Հայոց արքա:**



1

Պարսկա-հռոմեական հակամարտությունը վերսկսվեց **Ճապուհ II Երկարակյացի (309–379)** օրոք: Դարձյալ տուժեց Հայաստանը, որը **387 թ. Հռոմը և Պարսկաստանը բաժանեցին իրար միջև:** Պարսկա-բյուզանդական պատերազմները, մերթ մարելով, մերթ բորբոքվելով, շարունակվեցին մի քանի դար: **591 թ. տեղի ունեցավ Հայաստանի երկրորդ բաժանումը** տերությունների միջև, ընդ որում՝ Հայաստանի տարածքի մեծ մասը անցավ Բյուզանդիային:

Պարսկա-բյուզանդական պատերազմները խիստ թուլացրին երկու տերություններին և հեշտացրին արաբների համար նրանց տարածքների նվաճումը:

2

Վարդան Մամիկոնյանի և Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբությունների մասին

Հպատակ ժողովուրդներից շատերին Բյուզանդական կայսրությունից կտրելու նպատակով՝ պարսից արքունիքը բռնի կրոնափոխության քաղաքականությանն անցավ: Այդ պարտադրանքը Հայաստանում հանգեցրեց **450–451 թթ. ապստամբությանը**, որը գլխավորեց Վարդան Մամիկոնյանը: Ապստամբության գագաթնակետը 451 թ. մայիսին Ավարայրի ճակատամարտն էր, որը պարտադրեց Պարսկաստանին հրաժարվելու բռնի կրոնափոխության ծրագրից: Բայց կրոնափոխության պարսկական ծրագիրը շարունակեց մնալ օրակարգում, և դա էր պատճառը, որ **481–484 թթ. նոր ապստամբություն** բռնկվեց պարսկական տիրապետության դեմ: Այս անգամ ապստամբությունը գլխավորեց Վարդան Մամիկոնյանի հորեղբոր որդի Վահան Մամիկոնյանը: Ակոռի և Ներսեհապատի ճակատամարտերում պարսկական զորքերի կրած պարտությունները, ինչպես նաև գահակալի փոփոխությունը, հանգեցրին նրան, որ Պարսկաստանին չհաջողվեց կրոնափոխել Հայաստանը:

3

Իրանի տնտեսության համար կարևոր նշանակություն ուներ տարանցիկ առևտուրը: Իրանի տարածքով էր անցնում **«Մերասքսի ձանապարհ»**-ը, որը կապում էր Արևմուտքը Հնդկաստանի և Չինաստանի հետ: Այդ ուղու վրա էր գտնվում Իրանի մայրաքաղաք **Տիզբոնը**՝ Տիզբիսի ափին: IV–VI դդ. ընթացքում Պարսկաստանը և Բյուզանդիան պարբերաբար պատերազմում էին նաև հյուսիս-հարավ առևտրական ուղին վերահսկելու համար, որն անցնում էր Հարավային Կովկասով և Սիրիայով դեպի Արաբական թերակղզի:

2

4

Խալիֆը ստիպված էր հրաժարվել աշխարհիկ իշխանությունից և սելջուկների առաջնորդ Տուղրիլին թագադրել սուլթան: 1071 թ. Մանազկերտի ձակատամարտում սելջուկները ջախջախեցին բյուզանդական բանակը և գրավեցին Բյուզանդիայի տարածքի մեծ մասը: Ստեղծվեց **Սելջուկյան սուլթանությունը, որը ձգվում էր Փոքր Ասիայից մինչև Աֆղանստան: Իրանը Սելջուկյան տերության հիմնական տարածքն էր:**

5

Շահ Աբասը բարեփոխեց տերության ներքին վարչատարածքային կառավարումը: Խոշոր մարզերը ղեկավարում էին շահի նշանակած խաները: Տերության բյուջեն համալրվում էր բնակչությունից հավաքվող հարկերից և առևտրից գանձվող մաքսերից:

Տերության մայրաքաղաք դարձավ Իրանի կենտրոնում գտնվող **Սպահան** քաղաքը: Բարեկարգվեցին ճանապարհները, կառուցվեցին կամուրջներ, իջևանատներ, անցկացվեցին ջրանցքներ, զարգացավ ներքին և արտաքին առևտուրը: Դզլբաշների անկանոն զորամասերի փոխարեն շահ Աբասը, անգլիացի սպաների օգնությամբ, ստեղծեց կանոնավոր բանակ, որը զինված էր ժամանակի լավագույն հրազենով և հրետանիով: Նոր թնդանոթների ձուլման գործում մեծապես օգնեցին անգլիացի Շելլի եղբայրները: Շահ Աբասը ուզեցնեցից հետ գրավեց Խորասանը, իսկ անգլիական նավատորմի օգնությամբ պորտուգալացիներից ազատեց Քեշմ կղզին և ապահովեց ծովային առևտուրը Պարսից ծոցով:

6

Օսմանյան տերությունը մեծ բանակ ուղարկեց պարսկական զորքերի դեմ: Շահ Աբասը նահանջեց Թավրիզ՝ հրաման տալով հրկիզել ու ավերել ճանապարհամերձ բոլոր գյուղերն ու բնակավայրերը, զրկելով օսմանյան բանակին պարենից: Միևնույն ժամանակ նրա հրամանով բռնագաղթեցվեց Արարատյան դաշտավայրի, Նախիջևանի և հատկապես **Ջուղա քաղաքի** հայությունը: Օսմանյան զորքերը, անցնելով ամայացած վայրերով, քաղցած, ուժասպառ հասան Ատրպատական և հրաժարվեցին շարունակել արշավանքը: Օսմանյան բանակը կազմալուծվեց, նրանց գրաված տարածքներում վերահաստատվեց Սեֆյանների գերիշխանությունը:

Միջնադարյան Իրանի մշակութային նվաճումները հատկապես վառ են դրսևորվել պարսկալեզու գրականության մեջ: **«Ասում են՝ պարսիկները հինգ դարերի իրենց բոլոր պոեզիաներից միայն յոթ բանաստեղծ են համարել արժանավոր, բայց չէ՞ որ խորանվածներից շարերն ինձնից ավելի բարձր են»**, այսպիսի գնահատական է տվել պարսկական պոեզիային գերմանացի մեծ բանաստեղծ **Գյոթեն**: Այնպիսի բանաստեղծներ, ինչպիսիք են **Ֆիրդուսին (940–1020)**, **Օմար Խայամը (1048–1131)**, **Խաթանին (1120–1199)**, **Նիզամին (1141–1209)** և շատ ուրիշներ, արժանի տեղ ունեն համաշխարհային գրականության մեջ:

Ֆիրդուսին (934–1012) համաշխարհային գրականության մեջ մտել է իր **«Շահնամե»՝ Արքաների գիրք** ստեղծագործությամբ: Դրանում ներկայացված է Իրանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև VII դարը: Հեղինակը, տալով Իրանի արքայատոհմերի պատմությունը, մասամբ անդրադարձել է և հարևան ժողովուրդների պատմությանն ու մշակույթին: **Համարվել է պարսկական պոեզիայի 7 մեծ բանաստեղծներից:**

Օմար Խայամը (1048–1122) մաթեմատիկոս էր, բժիշկ, փիլիսոփա, աշխարհագրագետ, տոմարագետ, բանաստեղծ: Նա համաշխարհային գրականության մեջ մտավ բանաստեղծական քառյակներով և գրական այդ ուղղության անգերազանցելի վարպետը հանդիսացավ: **Համարվել է պարսկական պոեզիայի 7 մեծ բանաստեղծներից:**

Խաթանին (1120–1199) ծնվել և ապրել է Շամախի քաղաքում, եղել է Շիրվանշահերի պալատական բանաստեղծը: Ուխտագնացություն է կատարել Մեքքա, քանիցս եղել է Հայաստանում: Գրել է պոեմներ, քնարական գործեր, բանտային երգեր: Առավել հայտնի են նրա սատիրիկ (ծաղրական) բանաստեղծությունները՝ ուղղված քծնողներին, խաբեբաներին ու ստախոսներին: **Համարվել է պարսկական պոեզիայի 7 մեծ բանաստեղծներից:**

ՖԻՐԳՈՒՄԻ

Շահնամնի ծագումը

Ինչ որ այժմ ես քեզ կասեմ՝ պատմել են դեռ շատ վաղուց,
Հավաքել են ամեն պտուղ իմաստության ճոխ այգուց:

Արդ ինձ համար ուժից վեր է տեղ որոնել պարտեզում,
Ուստի նոճու շուքն է միայն հոգնած սիրտս երազում:

Գուցե նոճու շուքի ներքո գտնեմ հարմար մի տնակ,
Քանզի նրա տերևները բազմախիտ են, անքանակ:

Բայց տակավին չեմ խոնարհի իմ գլուխը հոգնաբեկ,
Մեր քաջերի մասին նորից գրի կառնեմ նոր վիպերգ:

Դու մի կարծիր բազմապատում մի հեքիաթ է վեպը այս,
Ավանդական ծեր մոգերը մեզ պատմել են մաս առ մաս:

* * *

Նրանք սիրով պահպանել են բազում մատյանք հինավուրց,
Որոնց մեջ և կային հազար վիպերգություն ու գրույց:

Բազմացրիվ այդ վեպերը ուներ ամեն մի մոբեթ,
Սակայն ամեն մեկը միայն մի մատյանի մեկնագետ:

Դեհկանական հին սերնդից ապրում էր մի փահլևան,
Զրույցների սիրահար էր ամրաբազուկ այն հսկան:

Մատենագետ մոբեթներին իր մոտ կանչեց և ասաց.
«Գրի առեք զրույցները թե՛ նոր կյանքի, թե՛ անցած»:

Այնուհետև հարցուփորձեց ծեր մոբեթից խորագետ.
Թե ինչպե՞ս են հնում ապրել շահ, նախարար իրար հետ:

Եվ ի՞նչ կերպ են երկիրն իրենց իշխել արար աշխարհում.
Եվ թե ինչո՞ւ մինչև հիմա օտար լուծն է մեզ տիրում...

Պատմեց՝ իրոք բախտը նրանց ինչ փառք բերեց, ինչ վախճան.
Ավաղ, ափսոս, այդ քաջերը կորան անհետ ու չկան:

Քանի դարեր որդոց որդի, քանի մորեթ պերճախոս
Գրի առան՝ ինչպես մեռան շահ, նախարար ու հերոս:

Երբ քաջարի մեր իշխանը լսեց ասքերն այդ ամեն,
Նա հավաքեց ավանդական մատենագիրք Շահնամեն:

Այդպես կերտեց նա հուշարձան, մի գիրք թողեց հիշատակ,
Որ կարդում են ծեր ու մանուկ և աշխարհը բովանդակ:

ՕՄԱՐ ԽԱՅԱՄ

Քառյակներ

Աշխարհի մեջ անմեղություն կա միթե,
Առանց մեղքի մարդ-գոյություն կա՞ միթե.
Մեղքիս համար երբ պատժում ես, ով աստված,
Իմ ու քո մեջ տարբերություն կա՞ միթե:

* * *

Գինին ջահել մարդու միակ պարծանքն է,
Խմենք, քանզի մեր վշտերի փրկանքն է.
Մի պարսավեք, թե ինչու է դառնահամ,
Գինին դառն է, որովհետև իմ կյանքն է:

* * *

Ամբողջ կյանքս այսպես լուռ է անց կենում,
Հառաչանքիս պես տխուր է անց կենում.
Կյանքում բնավ ես չտեսա մի լավ օր,
Հազար ափսոս, որ իզուր է անց կենում:

* * *

Մոգի գինու հետ թե հաշտ եմ, դա ճիշտ է,
Անհավատ ու կռապաշտ եմ, դա ճիշտ է.
Կրոնները կասկած ունեն իմ հանդեպ,
Թե հոգեպես նյութապաշտ եմ, դա ճիշտ է:

* * *

Ձեռքս տարա քո մազերին սիրավետ,
Իմ արածը սիրուց դրդված չէր երբեք.
Խելառ սիրոս քո մազերի մեջ տեսա,
Եվ մատներով խաղացի իմ սրտի հետ:

* * *

Չքնաղ վարդը սիրեկանի նման է,
Վարդագիսին՝ գոհար քարի նման է.
Բախտը թեև թշնամի է մշտապես,
Իբրև օտար՝ բարեկամի նման է:

* * *

Քո պտույտը անաղարտ չէ, ճվ երկինք,
Ինձ ազատիր, մեղապարտ չեմ, ճվ երկինք.
Իսկ եթե դու նախընտրում ես ապուշին,
Ես այնքան էլ խելոք մարդ չեմ, ճվ երկինք:

* * *

Երբ չենք լինի՝ միշտ կլինի անհունը,
Մեզնից անգամ չի մնա մեր անունը,
Լինելը և չլինելը փույթ չէ ինձ,
Աշխարհը կա ու կլինի միշտ նույնը:

ԽԱՔԱՆԻ

Երգեր Հայաստանի

Ես բարեկամ, ընկեր չունեմ իմ հարազատ Շիրվանում,
Ուստի մենակ, սիրտս խռով թափառում եմ աշխարհում:

Իմ Թավրիզում եթե, իրոք, ունենայի ես հանգիստ,
Չէի գնա դեպի Հայոց վեհ աշխարհը լեռնանիստ:

Իսկ եթե ես քաղեի իմ այգու ծառը ոսկերեք,
Նորից դեպի դրախտայգին չէի ձգտի ես երբեք:

Ա՛յս, չորացավ իմ հոգետունկ կանաչ այգին ծաղկավետ,
Չէ՞ որ գիտեմ գարնանաբեր անձրև չի գա այսուհետ:

Խորտակվել է բախտիս ճամփան, չարչարվում եմ հոգսերից,
Իմ ուզածը դեռ չի ծնվել, իսկ ինչ որ կա՝ պետք չէ ինձ:

* * *

Հրաժեշտի ժամին ասի՝ մնաս բարով, իմ Շիրվան,
Իմ հայրենիք, քեզ համար ես տարածեցի սուգ, շիվան:

Սիրտս տխուր ու միայնակ հասա Արաքս գետը խոր,
Նա էլ սրտիս արյան նման հոսում է լուռ, վշտածոր:

* * *

Բայց Արաքսը լավ հասկացավ իմ տանջանքը դառնագին,
Ողբահառաչ ձայնով կանչեց, ինձ անվանեց իր որդին:

Նա ասին էր տալիս անվերջ իմ ցավերի գետի պես,
Չայնակցում էր նրա երգին պղտոր սիրտս վշտակեզ:

* * *

Իմ Շիրվանից երբ որ եկա Հայոց հողը բարեբեր,
Ամեն մի հայ հյուրասերի ու բարության տեսք ուներ:

Համոզվեցին, որ իջել եմ ուղիղ չորրորդ երկնքից,
Այնքան նուրբ էր հնչում ձայնս իմ երգերի ակունքից:

Իմ երգերը անվանեցին քերթողական մի մեծ ծով,
Որտեղ, նույնիսկ, կխորտակվի Վանա լիճը խորախոր:

Ո՛վ բարեկամ, մի զարմանա, զի իմ երգը քաղցրաբառ
Վանա լճի դառը աղը կդարձնի զուտ շաքար: